



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
 «ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ»
 ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 07 » հուլիսի 2020թ. 48-Ձ

ք. Երևան

**ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՍՏԱՆԴԱՐՏ ՆՄՈՒՇՆԵՐԻ
 ՎԿԱՅԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 11-րդ կետերի դրույթները.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել Չափագիտության ազգային մարմնի կողմից ստանդարտ նմուշների վկայագրման կարգը:
2. Ուժը կորցրած ճանաչել 2015 թվականի հոկտեմբերի 5-ին հաստատված «Չափագիտության ազգային մարմնի կողմից ստանդարտ նմուշների վկայագրման կարգը» N 33-Վ հրամանը:
3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ստորաբաժանումը համակարգող տնօրենի տեղակալին:

ՏՆՕՐԵՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ԱԼԲԵՐՏ ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետություն
Չափազիտության ազգային մարմին

«Ստանդարտացման և

չափազիտության ազգային

մարմին» ՓԲԸ տնօրեն

2020թ. 07 « 07 » № 47-Ձ հրամանով

ԿԱՐԳ

ՍՏԱՆԴԱՐՏ ՆՄՈՒՇՆԵՐԻ ՎԿԱՅԱԳՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Չափագիտության ազգային մարմնի կողմից իրականացվող ստանդարտ նմուշների (այսուհետ՝ ՄՆ) վկայագրման գործողությունների հերթականությունը և ժամկետները, ՄՆ փաստաթղթերին ներկայավորող պահանջները և լրակազմը, ՄՆ վկայականի և ՄՆ նկարագրի ձևերը՝ հայտատուների հետ ՄՆ վկայագրման ընթացքում առաջացող փոխհարաբերությունները:

2. Ստանդարտ նմուշի վկայագրումը կատարվում է չափումների միասնականության ապահովման ոլորտում ՀՀ կառավարության կողմից ճանաչված չափագիտության ազգային մարմնի (այսուհետ՝ լիազորված մարմին) կողմից ՀՀ օրենսդրությանը համապատասխան ՄՆ փաստաթղթերի, այդ թվում՝ փորձարկումների (վկայագրման նպատակով փորձարկումներ) դրական արդյունքների, չափագիտական փորձաքննության հիման վրա:

2.1 Սույն կարգում օգտագործվող հասկացությունները կիրառվում են «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքում սահմանված իմաստներով:

2.2 Ստանդարտ նմուշի վկայագրումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ ՀՀ տարածքում գրանցված ՄՆ արտադրող և/կամ մշակողներ հանդիսացող ցանկացած իրավաբանական կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձանց դիմումի/հայտի համաձայն (այսուհետ՝ հայտատու):

2. ՎԿԱՅԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՏՈՒԻ ԿՈՂՄԻՑ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄՆԻՆ ԼԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ (ՆՅՈՒԹԵՐԸ)

1. Վկայագրման նպատակով հայտատուի կողմից լիազոր մարմին է ներկայացվում

ա) հայտ՝ նշելով ՄՆ անվանումը, նշանակությունը և կիրառության ոլորտը, ՄՆ հետ աշխատելու ժամանակ կիրառվող անվտանգության միջոցները և ՄՆ կիրառման համար անհրաժեշտ փաստաթղթերը (առկայության դեպքում), հայտատուի մասին տեղեկությունները (իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը (հասցեն) կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի ազգանունը, անունը, բնակության վայրը, հեռախոսի և ֆաքսի համարները, էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում), ըստ *Հավելված N 1-ի*

բ) ՄՆ տեխնիկական առաջադրանքը

գ) ՄՆ փորձարկումների արդյունքների վերաբերյալ փաստաթղթերը,

դ) ՄՆ մշակման վերաբերյալ գիտատեխնիկական հաշվետվությունը՝ (կից ներկայացնել ՄՆ փորձարկումների ծրագիրը, ակտը և փորձարկումների արձանագրությունը),

ե) ՄՆ նկարագրի նախագիծը,

զ) ՄՆ անձնագիրը, շահագործման փաստաթղթերի լրակազմը (առկայության դեպքում),

է) ՄՆ պիտակը (առկայության դեպքում),

ժ) ՄՆ մեկ օրինակ:

3. ՎԿԱՅԱԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3.1 Ստանդարտ նմուշի փորձարկումները (վկայագրման նպատակով փորձարկումները) իրականացվում են չափումների միասնականության ապահովման ոլորտի օրենսդրությանը համապատասխան:

3.2 Ստանդարտ նմուշի չափագիտական և տեխնիկական բնութագրերը (պարամետրերը) որոշելու ժամանակ ստանդարտ նմուշի փորձարկումների իրականացման ընթացքում օգտագործվում են մեծությունների միավորների այնպիսի չափանմուշներ, չափման միջոցներ, չափումների մեթոդիկաներ (մեթոդներ) և հաստատված տեսակի ՄՆ, որոնց համար ապահովվում է դրանց օգնությամբ ստացվող արդյունքների չափագիտական հետևելիությունը՝ Միավորների միջազգային համակարգի (ՄՀ), ազգային (առաջնային) չափանմուշների և/կամ մեծությունների միավորների միջազգային չափանմուշների կամ չափումների առաջնային հղումային մեթոդիկաների (մեթոդների) նկատմամբ:

3.3. Ստանդարտ նմուշի չափագիտական և տեխնիկական բնութագրերը (պարամետրերը) արտահայտվում են մեծությունների միավորներով կամ մեծությունների պայմանական սանդղակով (չափումների սանդղակով) գնահատվող մեծությունների պայմանական այն միավորներով, որոնց անվանումն ու նշագիրը համապատասխանում է Միավորների միջազգային համակարգին (ՄՄՀ):

Թույլատրվում է ՄՆ չափագիտական և տեխնիկական բնութագրերը (պարամետրերը) նշել այն միջազգային միավորներով, որոնք վերագրվում են Առողջապահության համաշխարհային կազմակերպության մեծություններին:

3.4. Փորձարկումների դրական արդյունքներ ասելով՝ հասկացվում է ՄՆ այնպիսի փորձարկումների արդյունքները, որոնք իրականացվում են ՄՆ մշակման տեխնիկական առաջադրանքում (այսուհետ՝ տեխնիկական առաջադրանք) (տեխնիկական պայմաններում)՝ նշված պահանջներին ՄՆ փորձարկումների արդյունքում որոշված չափագիտական և տեխնիկական բնութագրերի (պարամետրերի) համապատասխանությունը հաստատելու նպատակով:

4. ՄՆ ՎԿԱՅԱԳՐՄԱՆ ԸՆԹԱՑՈՈՒՄ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4.1 ՄՆ վերաբերյալ 2-րդ կետում նշված փաստաթղթերը (այսուհետ՝ փաստաթղթերի լրակազմ) հայտատուի կողմից ներկայացնելու օրվանից 30 աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում՝

ա) ուսումնասիրում է փաստաթղթերի լրակազմը սույն կարգի 2-րդ և 3-րդ կետերին համապատասխան,

բ) կայացնում է վկայագրման մասին որոշում (դրական կամ բացասական),

գ) ձևակերպում է ՄՆ վկայագրման մասին վկայականը՝ համաձայն Հավելված N 2-ի և ՄՆ նկարագիրը՝ համաձայն Հավելված N 3-ի, (այսուհետ, համապատասխանաբար՝ վկայագրման մասին վկայական, ՄՆ նկարագիր),

դ) սահմանում է վկայագրման մասին վկայականի գործողության ժամկետը (ՄՆ սերիական արտադրության համար՝ 5 տարուց ոչ ավելի, ՄՆ հատային արտադրության համար՝ ՄՆ պիտանելիության ժամկետին համարժեք ժամկետ),

ե) հայտատուին տրամադրում է վկայագրման մասին վկայական և ՄՆ նկարագիր,

զ) գրանցում է ՄՆ վկայականը ՍԶԱՄ տեղեկատվական կայքում:

4.2 Հայտատուի կողմից փաստաթղթերի լրակազմը չներկայացնելու կամ սույն կարգի 2-րդ և 3-րդ կետերի հետ անհամապատասխանության դեպքում, վկայագրումը լիազորված մարմնի կողմից կարող է մերժվել: Կայացված որոշման մասին ծանուցումը (հիմնավորմամբ) հանձնվում է հայտատուին կամ ուղարկվում է պատվիրված փոստային առաքանիով՝ հայտատուին հանձնման մասին ծանուցմամբ:

4.3 Մինչև վկայագրման մասին վկայականի գործողության ժամկետը լրանալը, ՄՆ չափագիտական և տեխնիկական բնութագրերին (պարամետրերին) վերաբերող փոփոխություններ հայտատուի կողմից կատարված չլինելու դեպքում, լիազորված մարմնի կողմից որոշում է ընդունվում նոր ժամկետով վկայագրման մասին: Տրամադրվում է վկայական և ՄՆ նկարագիր՝ հայտատուի գրավոր դիմումի և փաստաթղթերի լրակազմի հիման վրա, ընդ որում, օգտագործվում են ՄՆ վկայագրման համար ավելի վաղ իրականացված փորձարկումների (վկայագրման նպատակով փորձարկումների) արդյունքների փաստաթղթերը: Վկայագրման մասին նոր ժամկետով վկայականի և ՄՆ նկարագրի տրամադրումը կատարվում է սույն կարգի 4-րդ կետին համապատասխան:

4.4 Վկայագրման մասին վկայականը և ՄՆ նկարագիրը լրացվում է հայերենով: Համաձայնության դեպքում, վկայագրման մասին վկայականի և ՄՆ նկարագրի լրացնելը այլ լեզվով իրականացվում է վկայագրման մասին վկայականի և ՄՆ նկարագրի տարբեր կողմերում՝ համապատասխանաբար սույն կարգի 5-րդ և 6-րդ կետերին համաձայն:

4.5 Անհրաժեշտության դեպքում ՄՆ մշակողի և արտադրողի անվանումները և ՄՆ մասին տեղեկությունները կարող են նշվել լատինական այբուբենի տառերի օգտագործմամբ:

4.6 Վկայագրման մասին վկայականը և ՄՆ նկարագիրը լրացնելու ժամանակ բառերի (բացի ընդունվածներից), հապավումների օգտագործում և տեքստի ուղղումներ չեն թույլատրվում:

4.7 Վկայագրման մասին վկայականը և ՄՆ նկարագիրը կորելու կամ վնասվելու դեպքում լիազորված մարմնի կողմից տրվում է կրկնօրինակ, ընդ որում, վկայագրման մասին վկայականի և ՄՆ նկարագրի կրկնօրինակի վերին աջ անկյունում կատարվում է հետևյալ գրառումը՝ «Կրկնօրինակը տրված է 20 թ. _____-ին»:

4.8 Վկայագրման մասին վկայականի և ՄՆ նկարագրի մեջ սխալների (վրիպակների) հայտնաբերման դեպքում թույլատրվում է վկայագրման մասին վկայականի և ՄՆ նկարագրի փոխարինում՝ փոխարինող փաստաթղթի համարի և տրման ամսաթվի նշմամբ:

4.9 Վկայագրման մասին վկայականի և ՄՆ նկարագրի բոլոր դաշտերը պետք է լրացվեն (վկայագրման մասին վկայականի և ՄՆ նկարագրի բնօրինակներում դաշտերի համարակալումը բացակայում է):

5.ՄՆ ՎԿԱՅԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ

5.1 ՄՆ վկայագրման մասին վկայականը լրացվում է հետևյալ կերպ

ա) 1-ին դաշտում՝ մեկ տողով կատարված գրառում՝

Հայաստանի Հանրապետություն

Չափագիտության ազգային մարմին՝

բ) 2-րդ դաշտում՝ լիազորված մարմնի լրիվ անվանումը՝

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ

գ) 3-րդ դաշտում՝ երկու տողով կատարված գրառումներ՝

1-ին տող՝ «Վկայական»,

2-րդ տող՝ «ստանդարտ նմուշի վկայագրման»,

դ) 4-րդ դաշտում՝ լիազորված մարմնի կողմից վկայագրման մասին վկայականի գրանցման համարը և դրա տրման ամսաթիվը :

Վկայագրման մասին վկայականի գրանցման համարը տառաթվային ծածկագիր է, որի նիշերի յուրաքանչյուր խումբն առանձնանում է կետով և ձևավորվում է հետևյալ կարգով՝

առաջին և երկրորդ նիշեր՝ պետության 2-նիշանոց տառային ծածկագիրը՝ ISO 3166-1 միջազգային ստանդարտին համապատասխան,

երրորդ նիշ՝ 1-նիշանոց տառային ծածկագիրը, որը նույնականացվում է հայերեն այբուբենի մեծատառերի հետ և ունի հետևյալ նշանակությունը՝

Ս՝ ստանդարտ նմուշի սերիական արտադրություն.

Ե՝ ստանդարտ նմուշի եզակի օրինակ.

չորրորդ և հինգերորդ նիշեր՝ 2-նիշանոց թվային ծածկագիր, որը նշանակում է ՄՆ չափագիտական բնութագրերի (պարամետրերի) որոշման հետևյալ եղանակներից մեկը՝

01՝ մեծությունների միավորների պետական չափանմուշների օգտագործմամբ.

02՝ չափումների վկայագրված մեթոդիկաների (մեթոդների) կիրառմամբ.

03՝ այլ ստանդարտ նմուշի հետ համեմատելու միջոցով.

04՝ միջաբորատոր փորձարկումների օգտագործմամբ.

05՝ հաշվարկափորձարարական մեթոդի կիրառմամբ.

վեցերորդից ութերորդ նիշերը՝ ընթացիկ տարում ձևակերպված սերտիֆիկատի հերթական համարը, որը հաջորդաբար ձևավորվում է տարվա սկզբից (001 համարից).

իններորդ և տասներորդ նիշերը՝ վկայագրման մասին վկայականի տրման տարվա թվային 2-նիշանոց ծածկագիրը (նշվում են տարվա վերջին 2 թվերը՝ 00-ից մինչև 99):

դա) վկայագրման վկայականի ձևակերպման ամսաթիվը նշվում է բառաթվային եղանակով՝ օրը՝ արաբական երկու թվով (չակերտներում), ամիսը՝ տառերով, տարին՝ արաբական չորս թվով (տարվա կրճատ նշումով՝ «թ.»).

ե) 5-րդ դաշտում՝ ՄՆ վկայագրման մասին վկայականի գործողության ժամկետը,

զ) 6-րդ դաշտում՝ ՄՆ անվանումը,

է) 7-րդ դաշտում՝ ՄՆ գործարանային համարը (նշվում է ստանդարտ նմուշի եզակի օրինակի կամ ՄՆ խմբաքանակի համար, ՄՆ սերիական թողարկման դեպքում՝ դրվում է գիծ).

ը) 8-րդ դաշտում՝ ՄՆ արտադրողի անվանումը, իրավաբանական անձի գտնվելու վայրը (հասցեն) կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի ազգանունը, անունը, բնակության վայրը,

թ) 9-րդ դաշտում՝ լիազորված մարմնի ակտի համարը և դրա ընդունման ամսաթիվը (առկայության դեպքում).

ժ) 10-րդ դաշտում՝ վկայագրման մասին վկայականը տրամադրած լիազորված մարմնի ղեկավարի (լիազորված անձի) պաշտոնը, ստորագրությունը, ազգանունը, անունը՝ լիազորված մարմնի կնիքով վավերացված (առկայության դեպքում).

ժա) 11-րդ դաշտում՝ վկայագրման մասին վկայականի տպագրական համարը (սերիան և հերթական համարը, տպագրության դեպքում):

6. ՍՏԱՆԴԱՐՏ ՆՄՈՒՇԻ ՆԿԱՐԱԳՐԸ

6. Ստանդարտ նմուշի նկարագրը լրացվում է հետևյալ կերպ.

ա) 1-ին դաշտում՝ մեկ տողով կատարված գրառում՝

Հայաստանի Հանրապետություն

Չափագիտության ազգային մարմին

բ) 2-րդ դաշտում՝ վկայագրման մասին վկայական տրամադրած լիազորված մարմնի լրիվ անվանումը՝

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին»

գ) 3-րդ դաշտում՝ մեկ տողով կատարված գրառում՝

«ՍՏԱՆԴԱՐՏ ՆՄՈՒՇԻ ՆԿԱՐԱԳԻՐ»

դ) 4-րդ դաշտում՝ ՄՆ լրիվ անվանումը՝ վկայագրման մասին վկայականին համապատասխան.

ե) 5-րդ դաշտում՝ մեկ տողով կատարված գրառում՝

«ստանդարտ նմուշի վկայագրման մասին վկայականի»,

զ) 6-րդ դաշտում՝ վկայագրման մասին վկայականի գրանցման 11-նիշանոց համարը և տրման ամսաթիվը.

է) 7-րդ դաշտում՝ ՄՆ նշանակությունը՝ նշելով այն չափումների (փորձարկումների) մեթոդիկաները (մեթոդները), չափման միջոցները, որոնց համար առաջարկվում է կիրառել ՄՆ, այն արտադրության ոլորտը և արդյունաբերության ճյուղը, որտեղ առավելապես պետք է ՄՆ կիրառել.

ը) 8-րդ դաշտում՝ ՄՆ նկարագրությունը՝ նշելով ձևը, չափերը, ագրեգատային վիճակը, այն նյութը, որից պատրաստվել է, ՄՆ բաժնեծրարման բնութագիրը, ՄՆ օրինակների քանակը լրակազմում, ՄՆ պատրաստողի կողմից նշվող լրացուցիչ տեղեկությունները (առկայության դեպքում),

թ) 9-րդ դաշտում՝ ՄՆ թողարկման ձևը (հատերով, սերիական, անընդմեջ արտադրություն կամ կրկնվող խմբաքանակներով արտադրություն).

ժ) 10-րդ դաշտում՝ ՄՆ չափագիտական բնութագրերը (պարամետրերը) ՄՆ չափագիտական բնութագրերի (պարամետրերի) անվանումը, թույլատրելի արժեքների սխալանքի միջակայքը, թույլատրելի արժեքների սխալանքի և/կամ ընդլայնված անորոշության արժեքի սահմանները,

ժա) 11-րդ դաշտում՝ ՄՆ օրինակի պիտանելիության ժամկետը կամ ՄՆ չափագիտական բնութագրերի (պարամետրերի) ստուգումների իրականացման պարբերականությունը.

ժբ) 12-րդ դաշտում՝ ՄՆ լրակազմությունը հետևյալ նշմամբ՝

ՄՆ փաթեթվածքի լրակազմությունը (օրինակների քանակը), պիտակով փաթեթվածքի տեսակը, որով ՄՆ մատակարարվում է սպառողին,

ՄՆ անձնագիրը և այլ շահագործման փաստաթղթերի ցանկը,

ժգ) 13-րդ դաշտում՝ ՄՆ նկատմամբ պահանջներ սահմանող փաստաթղթեր, ներառյալ՝ այն տեխնիկական փաստաթղթի անվանումը և նշագիրը, որի համաձայն թողարկվում է ՄՆ (տեխնիկական առաջադրանք և/կամ տեխնիկական պայմաններ),

ՄՆ փորձարկումների (վկայագրման նպատակով փորձարկումների) ծրագիրը,

ՄՆ կիրառումը սահմանող փաստաթղթերի անվանումը և նշագիրը,

ստուգիչ սխեմայի վերաբերյալ փաստաթղթի անվանումը և նշագիրը (առկայության դեպքում),

ՄՆ վերաբերյալ փաստաթղթերի թարմացման պարբերականությունը,

ժդ) 14-րդ դաշտում՝ փորձարկումների (վկայագրման նպատակով փորձարկումների) համար ներկայացված ՄՆ օրինակի (խմբաքանակի) համարը և թողարկման ամսաթիվը,

ժե) 15-րդ դաշտում՝ ՄՆ մշակողի անվանումը, իրավաբանական անձի գտնվելու վայրը (հասցեն) կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի ազգանունը, անունը, բնակության վայրը, հեռախոսի և ֆաքսի համարները, էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում),

ժզ) 16-րդ դաշտում՝ ՄՆ պատրաստողի անվանումը, իրավաբանական անձի գտնվելու վայրը (հասցեն) կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի ազգանունը, անունը, բնակության վայրը, հեռախոսի և ֆաքսի համարները, էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում),

ժէ) 17-րդ դաշտում՝ հայտատուի անվանումը, իրավաբանական անձի գտնվելու վայրը (հասցեն) կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի ազգանունը, անունը, բնակության վայրը, ինչպես նաև հեռախոսի և ֆաքսի համարները, էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում),

ժը) 18-րդ դաշտում՝ ՄՆ փորձարկումներ (վկայագրման նպատակով փորձարկումներ) անցկացնող փորձարկման կենտրոնի անվանումը, դրա գտնվելու վայրը (հասցեն), հեռախոսի և ֆաքսի համարները, էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում), հավատարմագրման վկայագրի համարը ու գործողության ժամկետը կամ պետության օրենսդրությանը համապատասխան՝ լիազորելու մասին փաստաթղթի անվանումը և հրապարակման ամսաթիվը.

ի) 19-րդ դաշտում՝ ՄՆ նկարագիր տրամադրած լիազորված մարմնի ղեկավարի (լիազորված անձի) պաշտոնը, ստորագրությունը, ազգանունը, անունը՝ լիազորված մարմնի կնիքով վավերացված (առկայության դեպքում),

իա) 20-րդ դաշտում՝ տեսակի նկարագրի թերթիկի համարը և թերթիկների ընդհանուր քանակը (նշվում է յուրաքանչյուր էջի վերջում):

7. ՎԿԱՅԱԳՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Ստանդարտ նմուշների վկայագրման համար վճարում է հայտատուն՝ կնքված պայմանագրով նախատեսված կարգով:

Ստանդարտ նմուշի վկայագրման հայտի ձևը

Հայաստանի Հանրապետություն
Չափագիտության ազգային մարմին
«Ստանդարտացման և չափագիտության
ազգային մարմին» ՓԲԸ

ՀԱՅՏ

ՍՏԱՆԴԱՐՏ ՆՄՈՒՇԻ ՎԿԱՅԱԳՐՄԱՆ

Հարգելի պարոն _____

Ձեզ եմ ներկայացնում _____

ստանդարտ նմուշի լրիվ անվանումը

ստանդարտ նմուշի (նմուշների) վկայագրման նպատակով:

Ստանդարտ նմուշը նախատեսված է _____

նշանակությունը և կիրառության ոլորտը

Ստանդարտ նմուշը (նմուշները) մշակվել է (են) _____

մշակող և/կամ արտադրող կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը (հասցեն)

Առդիր՝

- հայտատուի մասին տեղեկատվությունը _____ թերթ,
- ՄՆ նմուշի հետ աշխատելու ժամանակ կիրառվող անվտանգության միջոցները և ՄՆ կիրառման համար անհրաժեշտ թույլատրման փաստաթղթերը _____ թերթ,
- ՄՆ տեխնիկական առաջադրանքը (տեխնիկական պայմաններ) _____ թերթ,
- ՄՆ մշակման վերաբերյալ գիտատեխնիկական հաշվետվությունը _____ թերթ,
- ՄՆ փորձարկումների ծրագրը, ակտը և փորձարկումների արձանագրությունը _____ թերթ,
- ՄՆ փորձարկումների արդյունքների վերաբերյալ փաստաթղթերը _____ թերթ,
- ՄՆ նկարագրի նախագիծը _____ թերթ,
- ՄՆ անձնագիրը, շահագործման փաստաթղթերի լրակազմը _____ թերթ,
- Ստանդարտ նմուշի մեկ օրինակ _____

Հայտը ներկայացնող կազմակերպության
ղեկավարի պաշտոնը

ստորագրությունը

ա.ա.հ

Կ.Տ.

Ստանդարտ նմուշի վկայագրման վկայականի ձևը

- (1) Հայաստանի Հանրապետություն Չափագիտության ազգային մարմին
- (2) «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ

(3) ԿԿԱՅԱԿԱՆ

ՍՏԱՆԴԱՐՏ ՆՄՈՒՇԻ ԿԿԱՅԱԳՐՄԱՆ

--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--

(4) « » _____ 20 թ

(5) Գործողության ժամկետը մինչև « » _____ 20 թ.

(6) Ստանդարտ նմուշի անվանումը _____

(7) Ստանդարտ նմուշի գործարանային համարը _____ (8)

Արտադրողը _____

(9) Ստանդարտ նմուշը վկայագրվել է լիազորված մարմնի « » _____ 20 թ.-ի

N _____ ակտով (համապատասխան ակտի առկայության դեպքում): Ստանդարտ նմուշը թույլատրվում է կիրառել ստանդարտ նմուշի նկարագրին համապատասխան:

(10) _____

<i>Լիազորված մարմնի ղեկավարի (լիազորված անձի պաշտոնը)</i>	<i>ստորագրությունը</i>	<i>ա.ա.հ.</i>
---	------------------------	---------------

(11) Վկայականի տպագրական համարը N _____

Կ.Տ.

(1) Հայաստանի Հանրապետություն Չափագիտության ազգային մարմին
(2) «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ

ՍՏԱՆԴԱՐՏ ՆՄՈՒՇԻ ՆԿԱՐԱԳԻՐ

(3)

(4)

ստանդարտ նմուշի լրիվ անվանումը

5) _____
ՍՆ վկայագրման մասին վկայական

(6) տրված « ____ » _____ 20 թ

(7) Նշանակությունը _____

(8) Նկարագիրը _____

(9) Թողարկման ձևը _____

(10) Չափագիտական բնութագրերը (պարամետրերը) _____

(11) ՍՆ Օրինակի (խմբաքանակի) պիտանելիության ժամկետը

(12) Լրակազմը _____

(13) ՍՆ նկատմանը պահանջներ սահմանող փաստաթղթերը _____

(14) Օրինակի (խմբաքանակի) համարը և թողարկման ամսաթիվը _____

(15) Մշակողը _____

(16) Արտադրողը _____

(17) Հայտատուն _____

(18) Փորձարկման կենտրոնը (լիազորված կազմակերպությունը) _____

(19) _____
*Լիազորված մարմնի ղեկավարի
(լիազորված անձի պաշտոնը)*

_____ *ստորագրությունը*

_____ *ա.ա.հ.*

Կ.Տ

(20) Ընդամենը _____ թերթ:

Թերթ N. _____